ՀԱՍՏԱՏՄԱԾ ԵՄ
ՏՆՕՐԵՆ՝ _____
«___» _____ 2022 թ.

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ ԵՄ
ՄԿԱ՝ _____
«01» 09 2022 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ Գ.ՓԱՐԱՔԱՐ

«ՓԱՐԱՔԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»ՊՈԱԿ

(ուսումնական հաստատության անվանումը, գտնվելու վայրը)

2Ա-ԻՆ ԴԱՍԱՐԱՆ

ԼԱԼԱ ԷԼԻԲԵԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(դասղեկի անունը, ազգանունը, հայրանունը)

«2022-2023» ուսումնական տարի

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

(դասարանի ընդհանուր բնութագիրը) II ա դասարանում սովորում են 26 աշակերտ՝ 12 տղա, 14 աղջիկ։ Բոլորն էլ ապահոված են դասագրքերով։ Դասարանի բոլոր աշակերտները խելացի են , ընկերասեր, նրանք բոլորն էլ առաջնորդվում են՝ ,,Բոլորը մեկի,մեկը բոլորի..՞/ նշանաբանով։ _Աշակերտները ապահովված են դասագր քերով և գրենական պիտույքներով։ Կարճ ժամանակում նրանց ուժերով ստեղծվել է կանաչ անկյուն.՞Դասարանում ընտրվել է դասարանի ակտիվ,ավագ և օգնականներ, ընտրվել են սանիտարներ, նրանք բոլորն էլ քաջ գիտակցում են իրենց անելիքները։ Դասարանում ունենք հատուկ կանոնադրություն։

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հետևել աշակերտների կարգապահությանը Խիստ ուշադրություն դարձնել նրանց բացակայություններին Ուսման մեջ դժվարություններ ունեցող աշակերտների հետ անցկացնել անհատական աշխատանքներ, խթանել նրանց ուսումնական ակտիվությունը Բացատրել աշակերտներին, թե ինչպես պետք է իրենց պահեն տանը, դպրոցում, փողոցում և այլ հասարակական միջավայրում Նպաստել աշակերտի անձնային որակների ձևավորմանն ու վարքագծի կարգավորմանը, խթանել սովորողի ինքնաճանաչման, ինքնազարգացման և ինքնագնահատման կարողությունների զարգացումը Անընդհատ հետևել դասագրքերի վիճակին, դասարանի հերթապահությանը Ծանոթացնել ճանապարհային երթևեկության կանոններին Ապահովել փոխադարձ կապ սովորողի ծնողի հետ։

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Աշակերտներին տալ հոգևոր ճիշտ դաստիարակություն՝ հեռու պահելով աղանդներից։ Երեխաների մեջ սերմանել հետաքրքրություն և համակրանք ազգային-եկեղեցական տոների, տոնակատարությունների հանդեպ, ծանոթացնել Հայաստանում դրանք նշելու ավանդույթներին, ձևերին։ Սովորեցնել տերունական աղոթքը։ 3.2 Գեղագիտական դաստիարակություն Երեխային սովորեցնել շրջակա աշխարհի մեջ տեսնել գեղեցիկը, տարբերակել այն, որին նպաստում են էքսկուրսիաները, զբոսանքները։ Փորձել աշակերտների օգնությամբ գեղեցիկ, ճաշակով կահավորել դասարանը՝ համապատասխանեցներով ժամանակի պահանջներին։ Սեր առաջացնել գեղեցիկի հանդեպ։

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Երեխաների հետ անցկացնել զրույցներ հայ ժողովրդի պատմական անցյալի, հայերի տարած հաղթանակների , հայ հերոսների,
հաղթական տոների մասին։ Սեր արթնացնել հայրենիքի, ազգի և բանակի հանդեպ։ Խոսել հայկական բանակի անպարտության,
զինվորների քաջության, արիության և թշնամու հետ տարած բազմաթիվ կռիվներում ունեցած հաղթանակների մասին։

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Այս դաստիարակության կարևորագույն խնդիրն է առողջության ամրապնդումը։ Պետք հետևել
աշակերտի նստելաձևին՝ կեցվածքի ճիշտ ձևավորման համար։ Հաճախակի կատարվում են ֆիզկուլտդադարներ և ընդհանուր
զարգացնող վարժություններ՝ նշելով դրանց ճիշտ կատարման կարևորության մասին։

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Պետք է սեր առաջացնել աշխատանքի հանդեպ։ Երեխային բացատրել, որ առանց աշխատանքի հնարավոր չէ ապրել, պետք է զրուցել
աշխատանքի կարևորության, ինչպես նաև աշխատանքի միջոցով ստեղծվող կյանքի համար անհրաժեշտ բարիքների մասին, առանց
որոնց հնարավոր չէ ապրել։ Սովորեցնել ճիշտ օգտագործել անհրաժեշտ նյութերը և աշխատանքային գործիքները տեխնոլոգիայի
դասերին։

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Պետք է խոսել բնության, շրջապատի մաքրության պահպանության անհրաժեշտության և կարևորության մասին։ Ծանոթացնել
բնապահպանական կանոններին, որին պետք է հետևի յուրաքանչյուր մարդ։ Պետք է կարողանան տեսնել, գնահատել, կանխել իրենց
շրջապատում տեղի ունեցող բնապահպանական խախտումները։

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Հաճախակի անցկացնել ծնողական ժողովներ, խոսել դպրոց-ընտանիք կապի անհրաժեշտության մասին։ Ծնողխորհրդի անդամների
միջոցով հաճախակի անցկացնել այցելություններ երեխաների տները՝ ծանոթանալու նրանց սոցիալական պայմաններին։ Անցկացնել
զրույց ռիսկային խմբի երեխաների ծնողների հետ։Անհրաժեշտության դեպքում կատարել անհատական աշխատանք ծնողների հետ։

Դասարանի ղեկավարի դաստիարակչական աշխատանքների թեմատիկան

	Անցկացման օրը,ամիսը,տարեթիվը	Անցկացման կիջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	Ծանոթություն
1.	**02-09-2022թ.**	Գիտելիքի օր	
2.	**09-09-2022թ.**	Մենք գնում ենք դպրոց	
3.	**16-09-2022թ.**	Անկախ Հայաստան	
4.	**23-09-2022թ.**	Ես դպրոցական եմ	
5.	**30-09-2022թ.**	Իմ պարտականություններն ու իրավունքները:	
6.	**07-10-2022թ.**	Ով է հետիոտնը:	
7.	**14-10-2022թ.**	Անձնական հիգիենա	
8.	**21-10-2022թ.**	Մեր փողոցներում	
9.	**04-11-2022թ.**	Մենք ծանոթանում ենք ճանապարհային նշաններին	
10.	**11-11-2022թ.**	Որտեղ կարելի է խաղալ	
11.	**18-11-2022թ.**	Սա պետք է իմանան բոլորը	
12.	**25-11-2022թ.**	Իմ հիգենիան	
13.	**02-12-2022թ.**	Մեր հավատարիմ բարեկամը՝ լուսացույց	
14.	**09 -12-2022թ.**	Աշունն ու մեր քաղաքը	
15.	**16-12-2022թ.**	Ձմռան համայնապատկեր	
16.	**23-12-2022թ.**	Ամանորյա ղողանջներ	
17.	**27-01-2023թ.**	Նվիրել և ստանալ	
18.	**03-02-2023թ.**	Իմ մայր լեզու	
19.	**10-02-2023թ.**	Մայր իմ անուշ ու անգին	
20.	**17-02-2023թ.**	Ազգային տոներ	
21.	**24-02-2023թ.**	Իմ ընկերոջ ընկերն եմ ես	
22.	**01-03-2023թ.**	Քաղպաշտպանության օր:	
23.	**10-03-2023թ.**	Գարունը այնքան ծաղիկ է վառել	
24.	**17-03-2023թ.**	Ցերեկույթ նվիրված մայրության օրվան	
25.	**24-03-2023թ.**	Մենք, թռչունների բարեկամն ենք/պատրաստել թռչնի բներ/	
26.	**07-04-2023թ.**	Ճանապարհային երթևեկության կանոններ՝ ,,Փողոցն անցնելու կանոնները՝՝..	
27.	**14-04-2023թ.**	Հիգիենայի կանոնները	
28.	**21-04-2023թ.**	Հիշում ենք և պահանջում	
29.	**28-04-2023թ.**	Մենք ուղևորներ ենք	
30.	**05-05-2023թ.**	Քաղաքամերձ ճանապարհին	
31.	**12-05-2023թ.**	Մուլտֆիլմի դիտում և քննարկում	
32.	**19-05-2023թ.**	Հաղթանակած հայրենիք	
33.	**26-05-2023թ.**	Սովորում ենք պահպանել երթևեկության կանոնները	